

# ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԿԵԱՆՔ



ՍԱՅԻԾ 2015

**Չարաք, 2 Մայիս.-** Առաւտեան Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Գլխադրի Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Վազգեն Արդ. Ալեքսան:

**Կիրակի 3 Մայիս.-** (Կարմիր Կիրակի) Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յարութին, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Վազգեն Արդ. Յակոբեան:

**Չարաք, 9 Մայիս.-** Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Գլխադրի մատրան մէջ, ժամարարն էր Տ. Վազգեն Արդ. Գողչեան:

**Կիրակի, 10 Մայիս.-** «Տօն Երեման Սրբոյ Խաչին», գիշերային և առաւտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յակոբ Մայր Տաճարի մէջ, որմէ յետոյ Աւագ Խորանի վրայ մատուցուեցաւ Ս. և Անմահ Պատարագ: Պատարագեց և յատոր պատշաճի քարոզեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան: Կարդացուեցաւ Ս. Բարսեղ Հայրապետի Կոստանդ կայսեր ուղած բուլը՝ Ս. Խաչի լուսաւոր Երեւումին առիրով: Աւագ սեղանի վրայ կը տեսնուիր Ս. Խաչին նշանը՝ վառ կանքեղներով զարդարուած:

**Չարաք, 16 Մայիս.-** Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէճեան:

**Կիրակի, 17 Մայիս.-** Գիշերային և առաւտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յակոբ Մայր Տաճարի մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Աւագ Խորանի ձախակողմը գտնուող Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Պատարագեց և յատոր պատշաճի քարոզեց Տ. Աւետիս Վրդ. Խիրաճեան՝ «Զէ աստ, այլ յարեաւ» բնաբանով:

**Չորեքշաբթի, 20 Մայիս.-** Յաջորդ օրուայ Համբարձման Տօնին առթի, կեսօրէ վերջ ժամը 2:00-ին, Տ. Արիս Արք. Շիրվանեանի զիսաւորութեամբ, միաբան հայրեր ինքնաշարժով քարձրացան ծիրենեաց լեռ: Ամենապատի Պատրիարք Սրբազնը Ձիթենեաց լեռ ժամը 3:30-ին: Ժամը 4:00-ին Համբարձման Սրբավայրի շրջափակին մէջ պաշտուեցաւ Երեկոյեան ժամերգութիւնն ու մեծահանդէս նախատօնակը՝ նախազահութեամբ Ամենապատի Պատրիարք Սրբազն Հօր: Երկնադիմին պաշտուեցան «Եկեսցէ»ի և «Հակման» կարգեր և ապա գիշերային և առաւտեան ժամերգութիւնները Տ. Արիս Արք. Շիրվանեանի նախազահութեամբ: Արարողութիւնները վերջ գտան գիշերուան ժամը 10:00-ին:

**Հինգշաբթի, 21 Մայիս.-** Համբարձումն Տեան: Առաւտեան ժամը 6:45-ին Տ. Արիս Արքեպիսկոպոսի զիսաւորութեամբ, միաբանութիւնը ինքնաշարժներով քարձրացան Ձիթենեաց և «Հրաշափառ»ով մուտք գործեց Համբարձման սրբատեղին, որ մեր վերնամատրան մէջ օրուան Ս. Պատարագը նատոյց և Համբարձման խորհութիւն շորջ քարոզեց Տ. Արիս Արք. Շիրվանեան: Քարոզեն ետք Ամենապատի Պատրիարք Սրբազն Հօր զիսաւորութեամբ կատարուեցաւ «Հայրապետական Մաղրանք» Սիս մայրաքաղաքն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեղարձի առիրով: Խսկ Ս. Պատարագեն ետք պատարագից Տ. Արիս Արք.ի նախազահութեամբ կատարուեցաւ «Անդաստան» Համբարձման սրբավայրի առջեւ:

**Չարաք, 23 Մայիս.-** Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի վերնայարկի վրայ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան: Կեսօրէ վերջ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ պաշտուեցաւ Բ. Ծաղկազարդի նախատօնակը: Հանդիսապետն էր Տ. Արիս Արք. Շիրվանեան:

**Կիրակի, 24 Մայիս.-** Երկրորդ Ծաղկազարդ: Գիշերային և առաւտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Նորայր Վրդ. Գաղագեան:

**Չարաք, 30 Մայիս.-** Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնա-

մատրան մէջ. ժամարարն էր S. Շնորհը Արդ. Պարյեան:

Երեկոյեան Հոգեզալստեան մեծահանդէս նախատօնակին ի U. Յակով նախազահեց Ամենապատի Պարտիարք Սրբազն Հայրը:

Իրիկնաղեմին Մայր Տաճարի մէջ պաշտոնեցան «Եկեսցե»ի և «Հսկման» կարգեր: Հանդիսապետն էր Լուսարարապետ S. Սեւան Արք. Ղարիպեան:

**Կիրակի, 31 Մայիս.-** Հոգեզալուստ: Օրուան հանդիսաւոր U. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ մատոյց S. Սամուել Ծ. Վրդ. Աղոյեան, եպիսկոպոսական խոյր ի զլուխ: U. Պատարագի ընթացքին «Առք կերէք»էն առաջ կարդացուեցաւ U. Յովիհաննու Ուսկերան Հայրապետի Հոգեզալստեան ներքողը:

Կէսօրէ եսր ժամը 3:00-ին Միարանուրիսնը մեկնեցաւ մեր գերեզմանատան մօտ գտնուող Վերնատունը, ուր կատարուեցաւ երեկոյեան ժամերգութին, որմէ յետոյ Միարանուրիսնը մտաւ U. Փրկիչի մեր գերեզմանատունը և հոգեհանգստեան պաշտօն կատարեց մեր Աքոնի հանգուցեալ Պարտիարքներու հոգիներու հանգստութեան համար:

## ՅՈՒՆԻՍ

**Հարաբ, 6 Յունիս.-** Յետ ժամերգութեանց U. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Գլխաղիրի խորանին վրայ: Ժամարարն էր S. Գեղրդ Արդ. Հայրապետեան:

**Կիրակի, 7 Յունիս.-** Յիշատակ Եղիայի Մարգարէին: Առաօտեան ժամերգութինը կատարեցաւ Մայր Տաճարի մէջ, իսկ U. Պատարագը մատուցուեցաւ U. Յարութեան Տաճարի մեր Վերնամատրան մէջ: Ժամարարն էր S. Ներսէս Արդ. Աղոյեան:

Կէսօրէ եսր U. Հոհիփսիմեանց նախանտօնակը պաշտուեցաւ U. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ:

**Երկուշարքի, 9 Յունիս.-** U. Կուսանացն Հոհիփսիմեանց: Առաօտեան ժամերգութինը պաշտուեցաւ ի U. Հրեշտակապետ, իսկ U. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան՝ U. Հոհիփսիմեանց մատրան մէջ: Ժամարարն էր S. Գեղամ Ծ. Վրդ. Զարարեան:

**Հարաբ, 13 Յունիս.-** U. Գրիգոր Լուսաւորչի Ելն ի Վիրապէն տօնին առքի U. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ U. Սեղանին վրայ: Ժամարարն էր S. Սամուել Ծ. Վրդ. Աղոյեան:

Նախատօնակին ի Սուրբ Յակով նախազահեց Ամենապատի Սրբազն Պատրիարք Հայրը, ըստ սովորութեան, արարողութեանց աւարտին երգուեցաւ «Տէր Ողորմեա» (⁹):

**Կիրակի, 14 Յունիս.-** Տօն Կարուղիկէ Եկեղեցւոյ U. Էջմիածնի: Հանդիսաւոր U. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խեղանին վրայ. Ժամարարն էր S. Վանիկ Վրդ. Մանկասարեան: «Հայր Մեր»էն առաջ U. Պատրիարք Հօր նախազահութեամբ կատարեցաւ «Հայրապետական Մաղթանք»:

**Հարաբ, 20 Յունիս.-** «Տօն Մեծին Ներսէսի Հայրապետին մերոյ և Խաղայ Եպիսկոպոսին»: Գիշերային և առաօտեան ժամերգութինները, ինչպէս նաև U. Պատարագը պաշտուեցան U. Հրեշտակապետաց վանքին մէջ: Ժամարարն էր S. Համբարձում Վրդ. Քէջիշեան:

**Կիրակի, 21 Յունիս.-** U. Պատարագը մատուցուեցաւ ի U. Յարութին մեր Վերնամատրան մէջ: Ժամարարն էր S. Բագրատ Վրդ. Պուրեցեան:

**Հարաբ, 27 Յունիս.-** Գիւտ Նշխարաց Սրբոյ մերոյ Գրիգորի Լուսաւորչին տօնին առքի գիշերային և առաօտեան ժամերգութինները, ինչպէս նաև U. Պատարագը պաշտուեցան U. Հրեշտակապետաց վանքին մէջ: Ժամարարն էր S. Կորին Վրդ. Բաղդասարեան:

**Կիրակի, 28 Յունիս.-** Գիշերային և առաօտեան ժամերգութինները կատարուեցան U. Հրեշտակապետաց վանքին մէջ: U. Պատարագը մատուցուեցաւ U. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին ի Նոր Երուսաղէմ: Ժամարարն էր S. Նետն Վրդ. Յովիհաննիսեան:

## ՅՈՒՆԻԼԻՍ

**Չորեքշարքի, 1 Յուլիս.-** Յաջորդ օրուայ Տօնի նախատօնակին ի U. Հրեշտակապետաց նախազահեց S. Սեւան Արք. Ղարիպեան:

**Հինգշաբթի, 2 Յուլիս.-** «Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն մերոց Սահակյա և Մեսրոպյայ» (Տօն ազգային): Գիշերային և առաօտքան ժամերգործինները կատարուեցան ի Սուրբ Հրեշտակապետաց, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ. ժամարարն էր Տ. Վազգեն Արք. Ալիքեան:

**Չարաք, 4 Յուլիս.-** «Սրբոց Տրդատայ թագաւորին մերոյ և Աշխեն Տիկնոցն և Խոսրովիդուխտին»: Գիշերային և առաօտքան ժամերգործինները ետք մատուցուեցաւ Ս. Պատարագ ի Ս. Հրեշտակապետաց. ժամարարն էր Տ. Տիրան Արք. Յակոբեան:

Կեսօրէ ետք դարձեալ ի Սուրբ Հրեշտակապետաց յաջորդ օրուայ Տօնի նախատօնակին նախազահեց Ամենապատի Սրբազն Հայրը:



**Ս. Հրեշտակապետաց**

**Կիրակի, 5 Յուլիս.-** «Գիւտ տփոյ Ս. Աստուածածնի». գիշերային և առաօտքան ժամերգործիններ կատարուեցան ի Ս. Հրեշտակապետ, որմէ յետոյ միարան միարան հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գերսենանի Ս. Աստուածածնայ Տաճար, որը Տիրամօր Սուրբ Գերեզմանին վրայ Ս. Պատարագը մատոյց Տ. Աղան Արք. Գոգշեան:

**Ուրբար, 10 Յուլիս.-** Յաջորդ օրուայ նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախազահեց Տ. Սեւան Արք. Նարիպեան:

**Չարաք, 11 Յուլիս.-** Սրբոց երկոտասան Առաքելոցն Քրիստոսի և Պողոսի՝ երեսասաներորդ առաքելոյն: Նկատի ունենալով որ նորոգործիններ կը կատարուին Ս. Յակոբ Մայր Տաճարին մէջ, Ս. Պողոսի Վերնա-

մատրան փոխարէն Սուրբ ժամերգործիններն ու Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց վաճրին մէջ: Ժամարարն էր Տ. Պարես Ծ. Վրդ. Երեցեան:

**Կիրակի, 12 Յուլիս.-** Առաօտքան ժամերգործինը կատարուեցաւ ի Սուրբ Հրեշտակապետաց, որմէ յետոյ միարան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Պատարագը մատուցուեցաւ մեր Վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէթճեան:

**Ուրբար, 15 Յուլիս.-** Յաջորդ օրուայ նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախազահեց Տ. Սեւան Արք. Նարիպեան:

**Չարաք, 18 Յուլիս.-** «Յիշատակ Տապանակին Հնոյ և տօն նորոյս Ս. Եկեղեցոյ»: Գիշերային եւ առաօտքան ժամերգործիններէն յետոյ ի Ս. Հրեշտակապետաց մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Աւետիս Վրդ. Իգիրածեան:

Կեսօրէ ետք միարան հայրեր կրկին մեկնեցան Ս. Հրեշտակապետաց վաճրը, համաձայն Ս. Արոտի աւանդութեան Վարդավառ տօնի նախընթաց օրը կը կատարուի նախատօնակ եւ կ'երգուի Յակոբոս Առաքեալի տօնի յատուկ «Յաղորդ Գտա» շարականը: Նախատօնակին նախազահեց Տ. Սեւան Արք. Նարիպեան:

Իրիկնադէմին նոյն եկեղեցոյ մէջ պաշտուեցան «Եկեղեց»ի և «Հսկման» արարողութիւններ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Նարիպեան:

**Կիրակի, 19 Յուլիս.-** Վարդավառ, «Տօն Այլակեպուրեան Տեառն մերոյ Յիշուսի Քրիստոսի»: Գիշերային և առաօտքան ժամերգործինները, ինչպէս նաև «Անդաստան»ի կարգը կատարուեցան Ս. Հրեշտակապետաց վաճրին մէջ, որմէ յետոյ մատուցուեցան Ս. Պատարագ. Պատարագեց եւ քարոզեց Տ. Սամուել Ծ. Վրդ. Աղոյեան:

**Երկուշաբթի, 20 Յուլիս.-** Յիշատակ Մեռելոց. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Ներսէն Արք. Ալյոյեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ «Հոգեհանգստեան Պաշտօն» ազգին համօրէն ննջեցեալներու եւ հաւատացեալներու հանգուցեալ հարազատներու հոգիններուն համար:

**Որբաք, 24 Յուլիս.-** Յաջորդ օրուայ տօնին նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց S. Սեւան Արք. Նարիպեան:

**Չարաք, 25 Յուլիս.-** «Սրբոց Թաղեռսի Առաքելոյն մերոյ և Սանդուռոյ Կուսին»: Գիշերային եւ առաօտեան ժամերգործինները յետոյ ի Ս. Հրեշտակապետաց, մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զարարեան:

**Կիրակի, 26 Յուլիս.-** Առաօտեան ժամերգործինը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, որմէ յետոյ միարան հայրեր մեկնեցան Ս. Յարութին. Պատարագ մատուցուեցաւ մեր Վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրճերեան:

### Օգոստոս

**Չարաք, 1 Օգոստոս.-** Սրբոց Որդոց և Թոռունց Սրբոյն Գրիգորի Լուսատրչին մերոյ՝ Արիստակէսի, Վրբանէսի, Յուլիանն, Գրիգորիսի և Դանիէլի»: Ս. ՊԱՍտարագը մատուցուեցաւ իր Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Արաջանեան:

**Կիրակի, 2 Օգոստոս.-** Գիշերային և առաօտեան ժամերգործինները կատարուեցան ի Ս. Հրեշտակապետաց, որմէ յետոյ մատուցուեցաւ Ս. Պատարագ. Ժամարարն էր Տ. Կորուն Վրդ. Բաղրամարեան:

**Չարաք, 8 Օգոստոս.-** «Սրբոյն Թեղոսի Թագաւորին եւ Մանկանց Եփեսոսի». Սուրբ Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Պարես Ծ. Վրդ. Երեցեան:

**Կիրակի, 9 Օգոստոս.-** Առաօտեան ժամերգործինը կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, որմէ յետոյ միարան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ տաճարի Վերնամատրան մէջ. Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերայթեան: Երբ ու դարձի բափօրին նախագահեց Տ. Արիս Արք. Շիրվանեան:

**Չարաք, 15 Օգոստոս.-** «Սրբոց Հայրապետացն Արանասի, Կիրոյի և Գրիգորի Աստուածաբանին». Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս.

Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Աւետին Վրդ. Խփրաճեան:

**Կիրակի, 16 Օգոստոս.-** Գիշերային և առաօտեան ժամերգործինները կատարուեցան ի Ս. Հրեշտակապետաց, որմէ յետոյ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Թեղողորս Վրդ. Զարարեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Խաղողի օրինորին:

**Երկուշաբքի, 17 Օգոստոս.-** Այսօր սկսաւ Ս. Կոյսի վերափոխման տօնը կանխող ամենօրեայ հանդիսաւոր պատարագներու մատուցումը Գերսեմանին Ս. Աստուածածնայ տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերսեմանին վրայ:

**Չարաք, 22 Օգոստոս.-** «Եփեսոսի Ս. Ժողովոյն երկու հարիս Հայրապետացն»: Առաօտեան ժամերգործինը կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, որմէ յետոյ միարան հայրեր և ժառանգաւոր սաներ մեկնեցան Գերսեմանին պարտէզ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Կոյսի գերեզմանին վրայ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Արածանեան:

**Կիրակի, 23 Օգոստոս.-** «Բարեկենդան Ս. Աստուածածնի Պահոց»: Գիշերային ժամերգործինը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետաց վաճրին մէջ, որմէ յետոյ միարան հայրեր եւ ժառանգաւոր սաներ մեկնեցան Ս. Յարութեան Տաճար. Ս. Պատարագը մատուցուեցաւ Տաճարին մեր Վերնատան մէջ. Ժամարարն էր Տ. Նորայր Վրդ. Գաղագեան: Երբ ու դարձի բափօրին նախագահեց Տ. Արիս Արք. Շիրվանեան:

**Որբաք, 28 Օգոստոս.-** Յաջորդ օրուայ տօնին նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց, նախագահեց Տ. Սեւան Արք. Նարիպեան:

**Չարաք.- 29 Օգոստոս.-** «Տօն Շողակաբի Սրբոյ Էջմիածնի՝ ըստ տեսլեանն Սրբոյն Գրիգորի Լուսատրչին մերոյ»: Գիշերային ժամերգործինը կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց:


Կեսօրէ վերջ Ամենապատի Պատրիարք Սրբազն Հօր գլխաւորութեամբ միարանութինը ինքնաշարժով մեկնեցաւ Գերսեմանի ձորը ու «Հռաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցաւ Երեկոյեան ժամերգործինն ու Վերափոխման

մեծահանդէս նախատօնակը՝ նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Սրբազն Հօր:

Գիշերասկիզբին, նոյն տաճարին մէջ պաշտոնցան «Եկեսցէ»ի «Հսկման» կարգերը և ապա առաւտեան ժամերգութիւն: Հանդիսավետն էր S. Արիս Արք. Շիրվանեան: Արարողութիւնները վերջ գտան գիշերուայ ժամը 10:00-ին:

**Կիրակի, 30 Օգոստոս.-** «Վերափոխումն Ս. Աստուածածնի». Առաւտեան ժամը 9:00-ին S. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ, միարան հայրեր ինքնաշարժով մեկնեցան Գերեզմանի ծորը ու «Հոաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր S. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան, եպիսկոպոսական խոյր ի գլուխ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյդ հանդիսաւոր Ս. Պատարագը և յաւոր պատշաճի քարոզեց: Ս. Պատարագէն ետք Ս. Կոյսի Գերեզմանին վրայ կատարուեցան «Անդաստան»: Երբ ու դարձի քափօրներուն նախագահեց Ս. Սեւան Արք. Ղարիպեան: Արարողութիւնները կատարուեցան կ. ա. Ժամը 11:45-ին:

**Երկուշաբթի, 31 Օգոստոս.-** «Յիշատակ Մեռելոց»: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր S. Գերոյ Արդ. Հայրապետեան, ապա S. Արիս Արք. Շիրվանեանի նախագահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան կարգը ազգիս համօրէն ննջեցեալներու հոգիներու փրկութեան համար:



Ս. Աստուածածնայ Տաճարի մուտքը

## ԵՐՋԱԿԱՑԻԾԱՏԱԿ ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՒԿՈՒՄ  
ԳՈՀԱՐ ԽՕՍՔԵՐԵՆ



Ա նցեալը մոռացութեան տուած ժողովուրդ մը կը նմանի մարդու մը, որ կորսնցուցեր է իր յիշուութիւնը:

Սակայն ճշմարիտ է նաև այն, որ երբ ժողովուրդ մը կանգնած կը մնայ անցեալի ժառանգութեան վրայ առանց ներկայ լիութեամբ ու ստեղծագործորէն ապրելու, առանց նոր խօսք ըսելու, առանց նոր արժեքներ ստեղծելու նոր ժամանակներու տարագով, այդ ժողովուրդի առջեւ կը փակուին դէպի ապագայ տանող դրուերը: Որքան ալ հարուստ եղած ըլլայ ժողովուրդի անցեալի ժառանգութիւնը, այդ կը դառնայ բանգարանի առարկայ:

Այո՛, դուն ժողովուրդ Հայոց, դուն «հօս փոքրիկ», անզին, անման, հազի փրկուած պատմութեան արհամիքներէն և վերջապէս հասած խաղաղ ու անվտանգ կեանքի ափին, դուն թեւերդ երկինք տարածած, աղօթ այսօր, և մենք ալ քեզի հետ, որ Յարութեան լոյսը յաղթ խասրին, մէզին, քարին՝ չար ծեռին, արդարութիւնը տուտին, կեղծիքին, ազատութիւնը բռնութեան դաին, խաղաղութեան երկնառար ոգին՝ պատերազմի մահուան ոյժերուն, զի «յարեալ Քրիստոս» արեգակն արդար:

\*  
\* \*

Ի՞նչ ունայնութիւն հոգեւորականի մը համար դրամ սիրել և ձգտիլ հարստութիւն դիզելու, երեմն նոյնիսկ տգեղ և ապօրէն միջոցներով: Ինչքա՞ն աղքատութիւն կայ այդպիսի հարստութեան մէջ: Եւ ինչքա՞ն անկոռնչելի հարստութիւն ունին բոլոր անոնք, որ Պողոս առաքեալի նման ոչինչ ունին, քայց ամէն քան ունին: